ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Հասմիկ Կամենդատյան, Սոցիալական ծրագրերի բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության ուժային մարմինների բյուջետային ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

ք. Ստամբուլ (Թուրքիա) 2023թ. հոկտեմբերի 1-ից հոկտեմբերի 5-ը ներառյալ

3. Հրավիրող կողմը:

Ասիական զարգացման բանկ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն Ասիական զարգացման բանկի և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից կազմակերպվող Աղետների ռիսկերի կառավարման ֆինանսավորում թեմայով տարածաշրջանային համաժողովին

5. Քննարկված թեմաները.

- Տարերային աղետների և համաճարակների ռիսկերը և Ասիական զարգացման բանկի նախաձեռնությունը տարերային աղետներին դիմակայելու հարցում,
- Ասիական տարածաշրջանի առանձին երկրներում, մասնավորապես, Կամբոջայում, Ֆիլիպիններում, Ղրղզստանում անցկացված դիագնոստիկական գնահատականների հիման վրա հիմնական եզրակացությունների և ցուցումների ներկայացում,
- Բնական աղետների և համաճարակների ռիսկերը Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրներում,
- Տարերային աղետներից ապահովագրությունը գյուղատնտեսական սեկտորում,
- Աղետների ռիսկերի կառավարման ֆինանսավորումը և ֆինանսավորման աղբյուրները,
- Աղետների ռիսկերի կառավարման բյուջետային և ապահովագրական ֆինանսավորումը, դրանց առանձնահատկությունները, թերությունները և առավելությունները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Տարածաշրջանային համաժողովին ներկա են գտնվել ավելի քան 20 երկրների ավելի քան 100 մասնակիցներ:

Համաժողովի ընթացքում Ասիական զարգացման բանկի և ՄԱԿ-ի զարգացման բանկի ներկայացուցիչների կողմից ներկայացվել են զեկույցներ և դասախոսություններ, որոնք ուղեկցվել են հարցուպատասխանի ռեժիմով: Ներկայացված զեկույցներին և դասախոսություններին հաջորդել են պանելային քննարկումներ, որոնց ընթացքում մասնակիցների կողմից ներկայացվել են իրենց երկրներում աղետների ռիսկերի կառավարման փորձը, առաջադրված խնդիրների լուծման հետ կապված առաջարկներ և կազմակերպվել քննարկումներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համաժողովի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Համաժողովի ընթացքում յուրաքանչյուր զեկույցի ներկայացումից հետո կազմակերպիչները հարցում էին անցկացնում մասնակից երկրներում աղետների ռիսկերի կառավարման ֆինանսավորման փորձի վերաբերյալ: Պանելային քննարկումների ընթացքում 2 անգամ ներկայացրել եմ ընթացիկ իրավիճակը Հայաստանում, հիմնական ռիսկերը, դրանց հաղթահարման և կանխման ֆինանսավորման հիմնական աղբյուրները, անդրադարձել եմ ներկայում Հանրապետությունում շրջանառվող 2023-2030թթ. աղետների ռիսկերի կառավարման ստրատեգիայի նախագծին, վերջինի հիմքում ընկած նորմատիվ-իրավական փաստաթղթերին (միջազգային փաստաթղթեր՝ համաձայնագրեր, կոնվենցիաներ):

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

10 հոկտեմբերի, 2023թ.